ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 6 ապրիլի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի
Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի
Վ. Պողոսյանի

Քննության առնելով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպությունը 19.03.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության սահմանադրականությունը:

2. Դիմողը ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած դիմումում խնդրել է. «ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող եւ անվավեր»:

3. Վիճարկվող դրույթի հակասահմանադրականության վերաբերյալ դիմողը ներկայացնում է հետևյալ հիմնավորումները. «...Վկայակոչված դատավարական իրավանորմը ապահովում է անձի կողմից վարչական դատարանին պահանջ (հայցադիմում, դիմում) ներկայացնելու սահմանադրական իրավունքը: Սակայն այն խտրականություն է առաջացնում դիմողների որոշակի խմբի համար: Վկայակոչված նորմի մեկնաբանությունը ցույց է

փալիս, որ Վարչական դատարան կարող է դիմել միայն այն անձը (ֆիզիկական կամ իրավաբանական), ում գնահատմամբ նրա իրավունքը ուղղակի խախտվել է: ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու...» պահանջով դիմել դատարան: [...] Սույն իրավիճակում սահմանափակվել է իրավապաշտպան հասարակական կազմակերպության միջազգային փաստաթղթերով եւ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատարան դիմելու իրավունքը»:

4. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ.

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմել սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

««Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ «խախտվել» բառից հետո «նրա» արտահայտության՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության եւ որպես պատասխանող ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

6 ապրիլի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/1-9